«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4
10.11.2023 թ.

1. ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգը՝ առաջարկվող փոփոխություններով:

2. ՀԱԱՀ կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնը Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վռամ Վաղինակի Դովլաթյանի անվան կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոն անվանակոչելու հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնն անվանակոչել Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վռամ Վաղինակի Դովլաթյանի անվան կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոն:

3. Տ.Բ. Ալոյանի թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ

Տաթևիկ Բաբկենի Ալոյանի՝ Զ.01.02 – «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող «Հայաստանում տարածված ճակնդեղի (Beta L.) վայրի տեսակների և պոպուլյացիոն սորտերի գենետիկական բնութագիրը որպես սելեկցիոն ելանյութ» անվանումով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

4. Ռ.Ա. Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

4.1. ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ջրային և հողային ռեսուրսների կառավարման ամբիոնի ասպիրանտ Ռազմիկ Արամի Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ոռոգման ջրի պահանջի սահմանման մեթոդաբանությունը թվային տեխնոլոգիաների կիրառմամբ» անվանումով՝ Զ.01.01. - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

4.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մարկոսի Եղիազարյանին:

5. Ս.Ա. Սարգսյանին որպես հայցորդ ձևակերպելու, ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

5.1. Սյուզաննա Ավետիքի Սարգսյանին ձևակերպել որպես հայցորդ ագրոնոմիական ֆակուլտետի այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնում:

5.2. Ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Տանձենու հիվանդությունները և դրանց վերահսկումը նորագույն տեխնոլոգիաներով ՀՀ Արագածոտնի մարզի պայմաններում» անվանումով՝ Զ.01.02. - «Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ:

5.3. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Վարուժանի Ավագյանին:

6. Տ.Ա. Ղլիջյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավարի փոփոխության հարցի վերաբերյալ

Տիգրան Արմենի Ղլիջյանի՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցող «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» անվանումով ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել Հայ-ռուսական համալսարանի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր Հրանտ Արարատի Բագրատյանին:

7. EAPI2020-065 ծածկագրով «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար» գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ

Գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթի շրջանակում ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի կողմից համատեղ իրականացվող EAPI2020-065 ծածկագրով «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար» (թեմայի ղեկավար՝ Աստղիկ Փեփոյան) գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը հաստատել և երաշխավորել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ